ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024 ԹՎԱԿԱՆ

Սիրելի քաղաքացիներ, անցած 2024 թվականը լայնածավալ բարեփոխումների, աշխատանքների տարի էր, որի ամփոփ արդյունքները ներկայացնում ենք ձեզ:

Աղբահանության համակարգ

Երկար տարիներ մեր համայնքի առաջ ծառացած գլխավոր խնդիրներից մեկը եղել է աղբահանությունը: Հնամաշ եւ սակավ տեխնիկական միջոցները խոչընդոտ էին դառնում աշխատանքի լիարժեք կատարմանը, նկատելի չէր լինում «Բնակարանային կոմունալ վարչության» աշխատակիցների ամենօրյա ջանքը համայնքի մաքրությունն ամբողջությամբ կազմակերպելու եւ պահպանելու համար:
Թերի աղբահանությունն իր հերթին ճյուղավորում էր բազմաթիվ խնդիրներ:
Աղբահանության խնդրին վերջնական լուծում տալու համայնքային իշխանության տեւական աշխատանքերը բերցին հիմնային արդյունքի:
Համայնքապետարանի ջանքերով, Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ եւ ՀՀ Կառավարության միջոցներով ձեռք բերվեցին 7 աղբատար, 1 ինքնաթափ մեքենաներ եւ շուրջ 1200 մեծ աղբաման, որոնք սպասարկում են ամբողջ համայնքը: **Ծրագրի իրագործման համար ՀՀ Կառավարությունից Վաղարշապատ համայնքին է տրամադրվել 476,100.0 (չորս հարյուր յոթանասունվեց միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:** Այս ներդրումը հնարավորություն է տվել ամբողջությամբ փոփոխելու աղբահանության աշխատանքների կատարման ժամանակացույցը եւ որակը, աղբամանների տեղադրման վայրերը: Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ բնակավայրի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները 185 բազմաբնակարան շենքերից կատարվել են ամեն օր, իսկ 148 անուն փողոցներից՝ օր ու մեջ հաջորդականությամբ, անհրաժեշտությունից ելնելով կենտրոնակ փողոցներում աղբահանությունը կատարվում է օրը անգամ:

Ասֆալտապատման աշխատանքներ

2024 թվականին համայնքային բյուջեով եւ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ հիմնանորգվել են ինչպես առաջնային նշանակության, այնպես էլ երբեք չասֆալտատված հողածածկ փողոցներ:

Հրատապության սկզբունքով հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել Տիգրան Մեծի փողոցում, Պատկանյան փողոցում, Վազգեն Սարգսյան փողոցի 2-րդ փակուղում:

Տիգրան Մեծ փողոցում կատարվել են նաեւ եզրաքարի փոխման դիտահորերի բարձրացման մայթեր հիմնանորոգման աշխատանքներ:
Կառավարության համաֆինանսավորմամբ 2024 թվականին ասֆալտապատվել են Արամ Մանուկյան 1-ին թաղամասի երեք փողոցներ:
Լայնամաստաբ շինարարական աշխատանքներ են արվել Էջմիածնի Իսի լե Մուլինո փողոցում:
Այս փողոցում կատարվել են մայթերի բարեկարգման, եզրաքարերի տեղադրման, ծառերի բնաբաժակների վերականգնման եւ անհրաժեշտ հատվածներում ավելացման, ասֆալտապատման աշխատանքներ:
Աաֆալտապատվել են նաև Մեխակյան փողոցը, Հունան Ավետիսյան փողոցի 1-ին փակուղին, Իսակով 4-րդ եւ 5-րդ փակուղիները, Սուրբ Մեսրոպ Մաշտոց 18 շենքի բակը, Արագածի զանգված տանող ճանապարհը, Անդրանիկ 2-րդ թաղամասի ներքին ճանապարհները, Միչուրին փողոցի 1-ին փակուղին:

Ապօրինի շինությունների ապամոնտաժում

Համայնքի բնակիչների համընդհանուր շահը մշտապես եղել եւ շարունակում է մնալ համայնքապետարանի որդեգրած գլխավոր քաղաքականությունը: Բնակիչների հետ հանդիպումների, քաղաքացիների ընդունելությունների ժամանակ այս մասին մշտապես նշել է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը՝ հստակեցնելով, որ հանրային տարածքները պետք է ծառայեն հանրային շահի՝ վերածվելով կանաչապատ, բարեկարգ հատվածների, խաղահրապարակների:
2024 թվականին Վաղարշապատ համայնքում շարունակվել են բակային տարածքներում եւ բազմաբնակարան շենքերին կից ապօրինի կառուցների քանդման (ապամոնտաժման) աշխատանքները: Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի 20 եւ 20Ա բազմաբանակարան բնակելի շենքերի պահպանման եւ սպասարկման համար հատկացված հողամասերում կառուցված ապօրինի կառույցները քանդվել են:
Արդեն կատարվել են մայթերի եւ կանաչ հատվածների առանձնացման, ասֆալտապատման աշխատանքներ: Եղանակային պայմանների բարելաման հետ կկատարվեն նաև կանաչապատման աշխատանքներ:

Ապամոնտաժվել են Սուրբ Մեսրոպ Մաշտոց փողոցի 10 և 12 շենքերի բակային հատվածներում գտնվող ապօրինի կցակառույցներն ու շինությունները: Ամբողջությամբ փոխվել է շենքերը սպասարկող կոյուղագիծը, կատարվել է ասֆալտապատում: Կառուցվել է ֆուտբոլի դաշտ, բարեկարգվել, սալիկապատվել է հարակից հատվածը: Էջմիածնի բաց երիտասարդական կենտրոնի նախաձեռնությամբ և համայնքապետարանի աջակցությամբ կատարվել է ծառատունկ:

Լեոնիդ Ազգալդյան թիվ 3 շենքի բակում ապամոնտաժվել են «Ձնծաղիկ» մանկապարտեզի ցանկապատին հարող ավտոտնակները: Այս հատվածում ապամոնտաժման աշխատանքները միտված են եղել նաեւ մանկապարտեզ հաճախող երեխաների անվտանգության ապահովմանը, քանի որ ավտոտնակներն ամբողջությամբ փակում էին դեպի փողոց տեսադաշտը: Այժմ, մանկապարտեզի բակային հատվածի շինաշխատանքներին զուգահեռ բարեկարգվելու է նաեւ այս հատվածը:

Համագործակցություններ

2024 թվականին համայնքային մի շարք կարեւոր ծրագրեր կյանքի են կոչվել ձեռք բերված համագործակցությունների շնորհիվ:

Տերյան փողոցի այգում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ համագործակցության արդունքում կառուցվել է արհեստական խոտածածկով մանկապատանեկան ֆուտբոլի դաշտ: Աշխատանքների ֆինանսավորումն ամբողջությամբ կատարվել է Ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից: Իսկ ցանկապատի տեղադրումը, լուսավորության համակարգի ապահովումը և տարածքի խնամքը համայնքապետարանի հոգածության ներքո են:

Չարենց թաղամասի թիվ 17 եւ 19 շենքերի բակում կառուցված խաղադաշտը Գերմանիայի եւ Շվեյցարիայի կառավարությունների եւ Վաղարշապատի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության եւ Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ Հայաստանի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի ներքո հայտարարված մրցույթում մեր համայնքի կողմից ներկայացված ծրագրային հայտի հաջողության շնորհիվ իրագործված նախագիծ է:

Յունիսեֆի հետ հունիսի 1-ին կնքվել է փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն էր Վաղարշապատի թիվ **8 «Ուստան»** նախադպրոցական ուսումնական հաստատության տարածքի և ներառական նախադպրոցական կրթական ծառայությունների ընդլայնումը: Ծրագրի շրջանակում հիմնովին վերանորոգվել է մեկ խմբասենյակ: Խմբասենյակը համալրվել է նոր գույքով, անհրաժեշտ պարագաներով, խաղալիքներով: Յունիսեֆի կողմից մանկապարտեզին է տրամադրվել նաեւ տեխնիկական եւ խաղային գույք:

Իսի լե Մուլինո փողոցի հիմանորոգման աշխատանքներին հաջորդել է խոշոր ծառատունկը: Վաղարշապատի համայնքապետարանը եւ «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ն համատեղ կատարել են փողոցի ծառատունկը, բանկի կողմից նվիրաբերել է 30 հատ Կանադական հուդայածառ:

Սրանք օրինակներ են համայնքապետարանի հաջող համագործակցությունների, որոնց նպատակն է աջակցել հասարակական կարեւոր նախաձեռնություններին եւ խթանել համայնքի կայուն զարգացմանը:

Համայնքապետարանի համագործակցությունները շարունակական են եղել նաեւ սոցիալական ապահովության ոլորտում: Վաղարշապատի համայնքապետարանի առաջնային և կարևոր խնդիրներից է համարվում սոցիալական ոլորտը: Համայնքապետարանի կողմից սոցիալապես անապահով ընտանիքների, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձնանց համար սոցիալական ծառայությունների հասանելիության և մատչելիության վերաբերյալ գործունեության տարբեր ծրագրի շրջանակներում վեր հանված հիմնախնդիրները նպատակ ունեն բարելավել ընդհանուր գործընթացը և սոցիալական աջակցության քաղաքականության վերաբերյալ առաջարկներ մշակել:

Առաջնորդվելով սոցիալական խնդիրների լուծման ու կարգավորման սկզբունքներով տարեսկզբին մեկնարկած սոցիալական աջակցության ծրագրի շրջանակներում Վաղարշապատ համայնքի սոցիալական ֆոնդից դեկտեմբերի 30-ի դրությամբ ֆինանսական աջակցություն է տրամադրվել 294 ընտանիքի, առավելապես առողջապահական նկատառումներով տրամադրվել է օգնություն՝ թվով 101 քաղաքացու, սոցիալապես խոցելի ընտանիքներին՝ 188 ընտանիքի, ինչպես նաև աջակցություն է տրամադրվել թվով 5 ուսանողի: Համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի մոտ ընդունելության է մասնակցել թվով 411 քաղաքացի:

Սոցիալական աջակցության ոլորտում ներառված են նաև Նպաստառուները Թոշակառուները. Միայնակ տարեց քաղաքացիները, Հաշմանդամություն ունեցող անձինք. Բազմազավակ ընտանիքները: Արցախյան պատերազմներում զոհված, վիրավորում ստացած կամ անհետ կորած ընտանիքները:

Վաղարշապատի համայնքապետարանի և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում բազմաթիվ ընտանիքների հատկացվել է նյութական աջակցություն՝ սնունդ, հիգիենայի պարագաներ և հագուստ: Շարունակական համագործակցություն ենք ունեցել «Շողիկ», «Հաղթահարելով աղքատությունը», «Մանկական զարգացման հիմնադրամ», «Վորդ Վիժն», «Հանուն ժողովրդի բարեկեցության», «Հայկական կարմիր խաչ» «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունների, Մայր Աթոռի սոցիալական ծառայության հետ:

Կրթություն եւ մշակույթ

2024 թվականին Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործող ինը մանկապարտեզներ հաճախել է 1221 նախադպրոցական տարիքի երեխա: Տարվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորմամբ հաճախել է 135 սան, բոլոր ՀՈԱԿ-ներում զեղչի արտոնությունից օգտվել է 170 երեխա:

Տարեսկզբին շահագործման է հանձնվել թիվ 4 «Ձնծաղիկ» մսուր-մանկապարտեզը, որը վերանորգվել է Կառավարության համաֆինանսավորմամբ եւ նախատեսված է շուրջ 280 երեխայի համար: Մանկապարտեզի վերաբացումը, նաեւ թիվ 6 «Արևիկ» պարտեզի շինաշխատանքերի ավարտը մեծապես կնպաստեն մանկապարտեզներում հերթերի խնդրի լուծմանը:

Պետության աջակցությամբ մասնակի գույք է տրամադրվել թիվ 10 «Ոսկեհատ» եւ թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզներին, ամբողջական գույքով համալրվել են թիվ 4 «Ձնծաղիկ» եւ թիվ 6 «Արևիկ» մսուր-մանկապարտեզները:

Համայնքապետարանի ենթակայության երաժշտական դպրոցներում ուսանում է թվով 588 սան: Դպրոցներում կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, համերգներ, կրթական հանդիպումներ, աշակերտները մասնակցել են հանրապետական եւ միջազգային բազմաթիվ մրցույթների, գրավել պատվավոր հորիզոնականներ: ՀՈԱԿ-ները համալրվել են անհրաժեշտ գույքով, «Իմ քայլը» հիմնադրամի կողմից առաջին երաժշտական դպրոցին նվիրաբերվել են տարբեր երաժշտական գործիքներ: Դպրոցներում զեղչի արտոնությունից օգտվել է 86 սան:

«ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ»-ում դեկտեմբեր ամսվա տվյալով սովորում է 323 սան: 44 աշակերտներ մասնակցել են ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ իրականցվող «Խաղաղություն» հանրապետական մանկապատանեկան մրցույթ–փառատոնին; Մեր դպրոցի առաջին դասարանի սանը զբաղեցրեց առաջին հորիզոնականը, դասավանդող ուսուցչուհին պարգևատրվել է «Լավագույն ուսուցիչ» անվանակարգում, իսկ դպրոցը՝ «Լավագույն դպրոց» անվանակարգով: Դպրոցում զեղչի արտոնությունից օգտվել է 41 սան:

Մեր համայնքի զբոսաշրջային ու մշակութային կյանքում բացառիկ դեր ունեն համայնքապետարանի ենթակայության թանգարանները: **«Պատմազգագրական» եւ Հովհաննես Հովհաննիսյանի** տուն-թանգարան ՀՈԱԿ-ներում անցկացվել են ուսումնակրթական բազում ծրագրեր ու միջոցառումներ: Թանգարաններն ակտիվ համագործակցել են տարբեր ՀՈԱԿ-ների և կառույցների հետ՝ մշակութային կյանքի ակտիվացման նպատակով:

Նախորդ տարի Թանգարաններն ընդհանուր առմամբ ունեցել են 8400 այցելու:

Անցած տարում **«Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարանը»** համալրվել է 1054 միավոր գրականությամբ՝ ստացված բյուջետային միջոցների հաշվին և նվիրատվության կարգով: Գրադարանային հավաքածուն դեկտեմբեր ամսվա դրությամբ՝ կազմում է 285. 201 միավոր: Գրադարանն ունի գրանցված 6375 ընթերցող:
2024թ. գրադարանն արժանացել է Կրթության նախարարության և Հայկական գրադարանային ասոցիացիայի կողմից կազմակերպվող «Լավագույն գրադարան 2024թ.» մրցույթի «Լավագույն նորարար գրադարան» պատվոգրի:
Լինելով մշակութային հարուստ ժառանգություն կրող օրրան, անցած 2024 թվականին եւս, պահելով լավագույն ավանդույթները, **Կոմիտասի անվան մշակույթի պալատում** հյուրընկալել ենք բազմաթիվ թաթերական ներկայացումներ եւ համերգային ծրագրեր, իրագործել բազմաժանր մշակութային նախագծեր:

Համայնքապետարանի ենթակայության ՀՈԱԿ-ները եւս ստեղծել եւ ընդլայնել են համագործակցության ուղիները: Հուշագրեր են ստորագրվել Կոմիտասի անվան մշակույթի պալատի եւ Աբովյանի դրամատիկական թատրոնի միջեւ:

Սպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցը համագործակցության համաձայնագրեր է կնքել Երեւանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի եւ Ալեքսանդր Սպենդիարյանի թանգարանի միջեւ: Համագործակցություններն ունեն տարիների պատմություն: Կողմերը համագործակցում են փոխադարձ միջոցառումների, կրթական ծրագրերի իրագործման, մասնագիտական հմտությունների զարգացման, ռեսուրսների փոխանակման եւ կազմակերպչական աջակցության հարցերում:

Վաղարշապատի համայնքապետարանի, «Արտպրոգրես» մշակութային հասարակական կազմակերպության եւ Հայաստանի Կրթության, գիտության եւ մշակույթի նախարարության համագործակցությամբ 5-րդ անգամ անցկացվեց «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների մանկապատանեկան միջազգային մրցույթ փառատոնը, որն իր շուրջ համախմբեց ավելի քան 1700 տաղանդաշատ երաժիշտ պատանիների՝ նոր էջ բացելով մեր երկրի եւ համայնքի մշակութային կյանքում:

Սպորտ

Մեծ են նաեւ մարզական ոլորտում գրանցած մեր հաջողությունները, սակայն առանձնացնում ենք Նոյեմբեր ամսին մեր մարզադպրոցի սաներ Գասպար Տերտերյանը եւ Սուրեն Աղաջանյանը գրանցած բառառիկ հաջողությունը: Մեր ըմբիշները դաձան Ըմբշամարտի զինվորականների աշխարհի 37-րդ առաջնության չեմպիոններ՝ ոսկե

մեդալները նվաճելով նույն օրը: Մեր համայնքն ու երկիրը նման բարձր պատվով ներկայացնելու համար նրանց շնորհվել է «Համայնքի ղեկավարի մեդալ»:

Երիտասարդություն

Երիտասարդների դերը համայնքում ոչ միայն մեծ է, այլ նաև անչափ կարևոր՝ բոլոր ոլորտներում շոշափելի փոփոխություններ առաջ բերելու գործում: Նրանք այն ուժն են, որը կարող է ձևավորել համայնքի ապագան, քանի որ այս շրջանում մարդիկ առավել քան երբևէ բաց են նոր գաղափարների, առաջադեմ մոտեցումների և նախաձեռնողականության համար: Նրանք նաև ավանդական արժեքների փոխանցողն են: Ահա այս տեսլականին հասնելու համար, երիտասարդությանը համայնքային կառավարմանը ներգրավելու նպատակով մենք ստեղծել ենք միջավայր, որտեղ նրանք կարող են հայտնաբերել իրենց ներդրումը և պատասխանատվությունը համայնքի զարգացման մեջ: Մասնավորապես, երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի գործունեության ապահովման համար համայնքային բյուջեից 2024 թվականի ընթաքում հատկացվել է 9 մլն դրամ: Հաշվետու տարվա ընթացքում կենտրոնը՝ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի և հասանելի երիտասարդական ծառայությունների տրամադրման միջոցով անվճար ծառայություն է մատուցել համայնքի 13-18 տարեկան 731 երիտասարդի (392 աղջիկ, 339 տղա)՝ Քաղաքացիական կրթություն, Կյանքի հիմնարար հմտություններ, Մասնագիտական կողմնորոշում, Առողջ ապրելակերպ, Առաջնորդություն և նախաձեռնողականություն, Բովանդակալից ժամանց հիմնական ուղղություններով:

Կրթական, տեղեկատվական և ժամանցային հագեցած ծրագրով նշել ենք Երիտասարդների միջազգային օրը, որին ներգրավված են եղել Էջմիածնի երիտասարդների տան, Վաղարշապատի երիտասարդական միության, համայնքում գործող Պատանի առաջնորդների դպրոց հաճախող երիտասարդները, և ոչ միայն:

Սիրելի՛ քաղաքացիներ, սա միայն մի մասն է այն աշխատանքի, որ կատարել ենք նախորդ տարի: 2025-ին մենք շարունակում ենք առավել մեծ ներուժով կատարել մեզ վերապահված առաքելությունը՝ զարգացնելով եւ բարեկարգելով մեր համայնքը:

Մենք հաշվետու ենք մեր համայնքի և ձեր առաջ: Առջևում դեռ շատ ծրագրեր և անելիքներ կան: